



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.yasu.am

№ 170 «__30__»__01__2018 թ.

Արձանագրություն N 170

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի
2018թ-ի հունվարի 30-ի նիստի**

Նիստին ներկա էին գիտխորհրդի 28 (քսանութ) անդամներից 18-ը:

Օրակարգ

1. 2017-2018թթ. ուս. տարվա առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում /զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. Թեկնածուական ատենախոսության թեմաների և գիտական ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
3. Թեկնածուական ատենախոսության թեմայի մասնագիտական շիֆրի ճշտման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
4. Թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի խմբագրման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
5. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ղեկնատի 2017-2018թթ. ուս. տարվա առաջին կիսամյակի արդյունքների ամփոփումը համարել բավարար:
2. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.
ա/ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի հայցորդ Ա. Հովասափյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ **«Իրանական գործոնը ՌԴ հարավկովկասյան քաղաքականության մեջ»**, ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեոյանին:
բ/ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասպիրանտ Գ. Պետրոսյանի **«Պատժամիջոցների կիրառման քաղաքական հիմքերը և մեխանիզմները արդի միջազգային հարաբերություններում»** ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և

գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեոյանին:

3. Հաստատեց ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի առկա ուսուցմամբ երրորդ տարվա սպիրանտ Է. Դավթյանի թեկնածուական ատենախոսության մասնագիտական շիֆրը՝ Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:
4. ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ա. Ջուլֆալակյանի **«Թուրք-սիրիական հարաբերությունները 1991-2002թթ.»** վերնագրով ատենախոսության թեման վերախմբագրել. **«Թուրքիայի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության փոխհարաբերությունները տարածաշրջանային հիմնախնդիրների համատեքստում 1991-2002թթ.»**, Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գ. Պետրոսյան

Խորհրդի քարտուղար, դոցենտ

Ա. Բարայեյան

Իսկականի հետ ճիշտ է՝